

“ԱՐԵՎԵԼԻ”
ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ
ԳԱՐԵԳՐԻ ՊՕՏԱՃԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, ՂԱԼԱԹԻԱ
ԲԱԶՄԱՆՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՆԵՐԸ
Կ. Պոլսոյ համար տարեկան 80 Ղ.Օ.
Վեցամսեայ 45 ՝
Գաւառներու համար տարեկան 105 ՝
Վեցամսեայ 60 ՝
Օսմանեան երկրներու համար տարեկան 85 ՝
Վեցամսեայ 90 ՝
Թղթաւորի ծախքը մեր վրայ

10 ՓԱՐԱՍ

Արեւել

ՅՈՐԱԹԵՐԹ ԱՉԳԱՅԻՆ

10 ՓԱՐԱՍ

ARREVEK
JOURNAL ARMÉNIEN
Directeur-Propriétaire
KARÉKIN BOYADJIAN
Cons/ple, Galata

ԲԵԱՔԱՆՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԾԱՌՈՒՄԸ

ՏԻՐԱՆԱԿԱՆՔ, 12 Ապրիլ
Խնդիր, խնդիր, խնդիր. հեռագրի միջոցով տեղեկատվություն, մանուշակապատ, ոլորապատյոյ դարձուածքներ, ցարդ աղ-ջամղային միջոցներով մէջ գործող կեղծ հոգիներու, դիմակաւոր սեւ ճիւղերու, յայտնուելու, ու դեռ որ մէկը ըսեմ, ինչ պէս ըսեմ, որպէս զի կարող ըլլամ, իբր թղթակից Արեւելի, նկարագրել տեղույս վիճակը, գործերը իրենց լարերէն թուա-յին ձեւին ներքեւ: Այնքան շատ ու այ-լապէս են անոնք, այնքան թեր ու գէժ ձեւերու մէջէն կ'անցնին եկած լուրերը, հասած տեղեկութիւնները, այնքան հա-կասական ու հակոթեղծ են պատերու վրայ, յաջորդաբար, գրեթէ անընդհատ-րէն փակցուած հեռագրի պատուիրները, որ հետեւող, զինող միտքը դժուար կա-րող կ'ըլլայ որոշել կարեւորը, ստորագր, կարեւորները, ենթարկելու համար զայն հասարակաց դատաստանին: «Երեսար կ'ուզեն», ճաթած ձայն մը լսելի կ'ը-լայ Պիթիւսէն: «Երեսար ու Գանուկի Է-սայան միասեղ պիտի ընդաման, ձայն Պալէն: «Բ. Ե. Գ. գործարանակներ Պո-սոյ վրայ կը լայն Սահմանադրութիւնը պատկերներ համար», լուր կուտայ Է. լեկտորական հասանք Մակեդոնիայէն: «Մենք պատահաւ եմ մեկնելու Պոլս, ի պատգամուրքին Սահմանադրութեան, ձայն կուտայ կարեւոր. » Պոլսը օտմ. կու-սակցութիւններ միացան, ի պատգամու-րքին», «Աստուծոյ մէջ իւրաքանչիւր, և այսպէս շարունակ, երկու շաբաթ է ի վեր. որ մէկին հաւատարմ, որը ընդու-նիս: Ինչ եղած է Սահմանադրութեան. դժուար է այդ որոշումը գաւառացի թղթակցին, որ հեռու կեդրոնէն, ուր կ'ուտան ու կը ծփան խնդիրները, և ուրիշ միայն ծագում կ'ունեն ամէն ինչ, յու-զում կամ խաղաղութիւն, վերջուտը կամ հանդարտութիւն: Գաւառացի թղթա-տարը, մասնաւորապէս խուճախ ըստա-ծը, այնքան տգէտ ու եսասէր, այնքան դիւրին կերպով տիրել ու հարստանալ սորված է որ անկարելի է իրեն համար ընդհանուր սեղանադրութիւն հանել, խըր-տիլ, շարժիլ, եղբայրասպանութեան իսկ դիմելու աստիճան, և եթէ հիմա ինչն իր վրայ կը գալարուի, ո՛չ որովհետեւ միա-պետութիւնը օգտակար է ընկերային տե-սակցութեան Սահմանադրութիւնը վնասա-կար, այլ վնաս զի ինքն տգէտ է և հե-տեւաբար ընդունակ իր գլուխը լեցնելու ամէն կերպ գաղափարներով ու մտածու-թիւններով որոնք սեւ, գաղտնի թանի մը հիշելու համար սխալութիւն կոչուի և կը հրա-մուտ լինի: Սոս. Բոլորին իր առաջին քայլին մէջ իսկ սխալեցաւ և թերեւս մեծ գոհոգութիւններով քան վերջապէս այդ սխալը, եթէ քանակ չէ ցարդ. այդ ըն-կերութիւնը փոխանակ անկեղծ ժողովը մը աշխատելու՝ ամբողջութեամբ համար սխալածը, ձեռք բերուածը, չլացաւ իրեն շարունակ կեղծ շողորմանքներէն, և ամբողջ ուղարկութիւնը կեդրոնացուց իրեն քոյր ընկերութիւնները խորհելու:



ՊԵՏՐՈՍ Է.Յ. ՀԱԼԱՃԵԱՆ
Անգամ Օսմ. Եւ Ազգ. Խորհրդարաններու

Հայու վիշտերու հանդէպ անտարբեր դիրք մը բռնելու, թողով անդին ողջ, առողջ, ալ զի մը ամբողջ վի-ճակի մէջ միապետական կենդանիները, կեղծու և կոփելու համար ընդամենը իրենց մոթ անձաւին մէջ: Ո՛չ մէկ փորձ ըրաւ այդ ընկերութիւնը միջնակներ սար-քելու խուճախին, տգէտ դատակարգէն հակացնելու համար Սահմանադրութիւնը, անոր չափով ըրաւ ընդունել. իր խախտու յաջորդութեան վրայ ստեղծով թողուց որ ընտրութիւններ ամէն կերպ զրպարտու-թիւններ հիւսն Սահմանադրութեան մա-քուր ու անկեղծ ճակատը սղծելու հա-մար. գէթ այս դիրքը բռնեց Տեղաւոր-կերտի Բոլորէն, որ հիմա, «Երեսար կ'ուզեն» գոռացող վճռակներուն առ-ջեւ կը սարսաղայ... Անցեալ որ ոստիկանի մը հետ տեսնուելով՝ հարցումներ ու-ղեցին: «Այս, Աստուած հոգին թող Շէ-րաթի մէջ առնէ. » Ինչ է եղբ, կը հարցնեն նորէն: «Ա՛հ, դուք չե՛ս գի-տեր, անոր մէջ արդարութիւն կայ, Սա-հմանադրութիւնը ոչինչ է, անարդար է, Շէրաթիին հակառակ է, անկեղծութիւն է » Եւ երբ կը համոզեմ զինքը, ըսածնե-րուն հակառակը փաստելով, կը պատա-խանէ: «Երեսար, ես չեմ գիտեր, ինչի-ս այսպէս հակադրեցեր են »: Ուրիշի մը հետ ալ տեսնուեցաւ, որ կ'ըսէր: «Սահմանա-դրութիւնը աղիւլ խաղցնել է »: Եւ երբ հակառակը կը պատասխանեմ, նախորդին պէս իր աշխատութիւնը կը խոտովային և այնպէս համոզուած ըլլաւ կը յայտնէ: Կը տեսնէք, ինչպէս կը համոզեն խեղճ զուրները որոնք այնքան պէտք ունին Սահմանադրութեան լոյսին. կը ամենէ՛ք ինչ պզգալի զրաւարտութիւններով կը փ-յփայեն, կը շոյեն անուս դատակարգը, Բոլորին ապուրիւն կ'աղածը: Բայց այդ խուճախները չէն խորհիլ թէ զուր է խիտանի դէմ աքցելու. պատմութեան մէջ յեղափոխութիւններու միջոցին որ միա-պետական շարժումները յաջողած են. չեն խորհիլ թէ ապագայութեան պաշտպանող-ները լարելութենէ, պղծութենէ, շահա-մոլութենէ ու շարագործութենէ աւելի գաղափարով զինուած են. չեն գիտեր թէ գաղափարը չի մեռնիր. թող այդ ա-

պուշները աչքի առնել բերեն Պարսկա-տանը, և ինչ որ աւելին է, չեմ կարծեր որ Եւրոպա նոյն համերաշտար ոգին, ու-նենայ թուրքիոյ հանդէպ՝ որքան ունի Պարսկաստանի համար, և այդ երկու եր-կրորդներուն մէջ ունեցած իր տարբեր տա-րբեր շահերուն համար... Տղայ մը, ա-պուշ մը, մտքով զայնացու մը ըլլալու է մէկը չկարենալ հաշուի առնելու համար այս ամէնը: Բիշ առաջ մեր իսլամ եղ-բայրներէն մէկուն կը հարցնեմ. « Ինչ կը խորհիս եղածներուն վրայ. — Թէեւ ես ալ Շէրաթ կ'ուզեմ, բայց պարսպ բան է, կը պատասխանէ իմաստօրէն. Եթէ տեղու-թիւններու կողմէ կը ըսուած, վաւերացուած զատարանը անկարելի է ալ ինչիւր և Շէ-րաթ հաստատել... Արդեօք այն ինչպիսի » ըստած արարած որ այնքան պայծառ-փայլ խայտառակութեամբ խորհրդարանէն զուր վճռուեցաւ, Սեփտի փայա կու-րուած մարդուը, որ ամբողջութեամբ հա-րուած մարդուը, կողմացու և ինչ որ կ'ու-զէք է, Բէքը Էֆէնդի ըստած խաթմ-մար, այս պարզապէս թուրքին չափ ալ մտածողութիւն չունին, երբ խուճա-նին զուրը անցած, մեղիները կը հա-ւաքուին, հեռագրատուներ կը լեցուին, կը պոսան, կը կանչեն, Շէրաթ կ'ուզեն եւն. և ինչ. անհեթեթութիւններու տեղի կուտան: Այս Տեղաւորներու ընտրութեան ներքին պարագայութիւնները ներկային մէջ. եթէ կ'ուզուի ու եւ չարիքի առնել առնել, այս երեքը մէկտեղել վերջնի պէտք է. երկու շաբաթ է ի վեր է որ նիւաղիի տունը կեդրոն եղած է. բոլոր պահանջները իրենք ծնունդ կ'առնեն, և եթէ կարելի է ըսել՝ խողովակն է ինքը Պոլսի և տեղույս միապետականներուն, և ոչ թէ գաղափարային այլ իրապարակաւ... Իր աջ բազուկն է Սեփտի փայա, որ անցեալ որ քաջուած չէ նոյն իսկ զինքը գաղափարութեան և խոհեմութեան հրախ-րող ճշմարիտ Սահմանադրական երեսանի հաղաղ հաղափարներին ըսել. «Այս քանի մը փառայի զինուորներով զիս վախը-նել կ'ուզեն. հիմա եթէ ուզեմ 4000 չախալախ ոտքի կը հանեմ: Այս օտմ. հարց ուտող, ձրի տիրութիւնը վախըղ սպերախտ մը որ այնքան լրուծութեամբ կը յանդգնի օտմ. զինուորները նախատել... Թող խորհրդարանը դուրս հանէ երկ-րէն... »

ՏԻՐ

(*) Չիֆթիկ Ազատութեան հերոս Նիւաղի պէյլի հետ: (Չ. Խ.)

կը դարձնէ՝ զինքը թագաւորելու: Նախա-րարաց խորհուրդը, որուն մէջ տիրապե-տող ձայն մը ունէր Սիւհադէ փայա, զանց ըրաւ բոլոր այդ նկատմունքները: Սուրաթ Ե. այդ օրինական տրամադրու-թեանց չնորիւ կրնար Գահուն վրայ մնալ:

Արդի թուրքիոյ պատմութեան ամէնէն աղետալի օրը կարելի է համարել իրա-ւամբ 1876 օգոստոս 31ի օրը:

ԳԼՈՒԽ Գ.
Ա.ՊՏԻՒԼ - ՀԱՄԻՆԻ
Գահակալութեան մը հեռագրութեամբ, Պահակալութեան հեղինակները, թագաւորութեան մը սկզբնաւո-րութիւնը - Խոստանալ ու չսար-գել. — Թուրքիա Եւ Եւրոպա:
Ուրեմն իրականացած էր Ապտիւլ-Հա-միտի երազը, ի վնաս ամենէն ապագա-միտ, ամենէն մարդասէր, ամենէն հեղա-մանքոր և ամենէն համարելի վեհա-պետին:

ԿԱԽԱՂԱՆ
Երբեմն աստուածութիւնն ու ազատու-թիւնը կը կախուէին անկէ, սակայն այսօր անարգութեան ու ստրկութեան մարմնա-ւորումները կը ճօճին անոր չուանէն:
Որքան ալ վայրագ ըլլայ ան, որքան ալ. ապրող արարածի մը վերջ տալու գա-ղափարը սահմանեցուցիչ ըլլայ, սակայն, երբ նկատուի առնեց որ ներկայ ընկերու-թիւնը, պոռնկացած մարդկութիւնը չատ, շատ հեռու կը գտնուի իտալական կեանքէն և, ընդհակառակը, միշտ գա-ղափարային ու արիւնխարան զգացումնե-րով կը տարուի այն ատեն որքան տխուր ու նկուն հոգիով, արտառուկեց աչքե-րով պիտի դիտէինք երկի հերոսներուն մահացումը կախաղանէն վար, այսօր հո-գիի անհուն հրեւանքով պիտի կանգ-նինք ու երկարօրէն, անքթիթթթթ պիտի դիտենք ոճագործներու զէմքերը, որոնք իրենց մահին մէջ անգամ վատութիւնն ու լարիւթիւնը կ'արտայայտեն:
Թուրքիայի ժողովուրդը մանաւանդ այնքան տարուած է ստրկութիւնով, կեղ-ծիքով ու տմարդութիւնով, այնքան այս-տովարկեցած ու փոտած է նոր ու ճշ-մարիտ կեանքի համար, որ անպայման պէտք ունի այս կորուկ միջոցին, Պոլսէն մինչեւ թուրքիայի ամենախոր անկիւն-ները, մանաւանդ գաւառները, մանա-ւանդ գաւառները:
Վերջապէս անագին տարբերութիւն կայ Պոլսի ու գաւառներու միջեւ. եթէ այստեղ վերջապէս քիչ մը մեղմ միջոց-ներով իսկ կարելի ըլլայ լաւ արդիւնք ձեռք բերել, անկարելի է նոյն կերպ մտա-ծել գաւառներու մասին, որովհետեւ այնտեղի ժողովուրդը շատ աւելի տգէտ, շատ աւելի վայրի, շատ աւելի գաղափա-րային ու արիւնխարան է, ասոր հետ մէկտեղ ալ շատ աւելի վատ, ստորեկ, ու վախկոտ է:
Ուսումնին հոգեբանութիւնն է առ ա-մէն ժամանակի ու ամէն տեղի մէջ, իսկ թուրքիայի մէջ մարմնացած իրողու-թիւնն է:
Թուրքիայի բարեկարգութիւնը իր վրճ-ուողական սխառեմէն կախուած ունի, օրի-նակի համար մարմնաւորուած շարութիւնը կարելի, բռնակալութիւնը զնդակահարել գէթ ժամանակի մը համար, այն ատեն կա-տարի գաղափարութիւնը չապուած պիտի ըլլայ:
Վախկոտութեամբ, գոմանտանքներու կամ ո՛ւր և է պաշտօնային պաշտօնականութիւնը հիմար ընաւ բարեկարգութեան չին սխառեմէն և պաշտօնական ընել և ուրիշ տեղ մը հաւանականաբար աւելի բարձր պաշտօնի կոչել. հին, ծոված, խա-խուսող է անշարժացող մեթոտն է ան. պէտք է պաշտօնական պաշտօնական միշտ անպաշտօն պահել և աւելի յանցապար-տեղ կարել, մէկ կողմէն նոր պաշտօն-տրամադրութիւններով առաջացող խու-ժանը վախկոտութեամբ երկրին շահերով մտահոգուող ժողովուրդին բարի տրամա-դրութիւնները կուսխու համար:
Այսպէս ուրեմն, կախաղան, միշտ կա-

խաղան, մանաւանդ թուրքիայի ներքին նահանգներուն համար:
Օրինակի համար, թող կախուի Ատա-նայի վայրի և տեսնենք ուրիշ որ մէկ նահանգի վայրի է որ պիտի համարձակի ուղարկուողական շարժում մը զեկա-վարն ու օժանդակ ըլլալու, թող կախուի իւրաքանչիւր նահանգի ոճագործ, չարա-գործ մէկ աղան, մէկ պէյլ, տեսնենք որ մէկ խուճախն է որ իր վայրագութիւնն. ներքին պիտի շարունակէ: Ընդհակառակը, մենք վստահ ենք որ այդ խողովուրդ, զրա-պուող կատարի ոգին իր իսկ տէր պիտի համար ու սարսափող պիտի լրացնէ կախա-ղանին պակասը:
Թո՛ղ ապրի կախաղանը, որքան ատեն որ չարիքը կ'ապրի, թո՛ղ սաւառնի սար. սափը, որքան ատեն որ մոթի հոգիներու մէջ տակաւին կը չնչէ ոճիւր:
Ու դարերն ու պատմութիւնը թուր-քիայի և մանաւանդ արող յեղափոխու-կան պատմութեան մէջ պիտի օրհնեն Սե-լանիկի բանակին փրկութիւնը թուրքիայի համար ու աստուածային դատարարութե-թիւնը ամբողջ աշխարհի համար:
Կեցցէ՛ բանակը, որ ներկայ մարդկու-թեան համար տակաւին պէտք մըն է, որ մեղի՝ անարգութիւնը, բռնակալութիւնը կախուած տեսնելու բախտը տուաւ:
ՇԱՀԱՆՔ ԵՍՏՓՈՒՐ
ՊԱՆՏՐՄԱՅԻ ԿԵԱՆԻՔԷՆ
ՊԱՆՏՐՄԱՅԻ, 21 Ապրիլ
Այս կիրակի, ցորեկին, Ազգ. վարչ. ժողովներու նախաձեռնութեամբ հոգե-հանգստեան պաշտօն կատարեցաւ ազգ. գերագմանատան մէջ այն քաջարի զին-ուորներուն, կամաւորներուն և դժբախտ նահատակներուն համար, որոնք բռնակա-լութեան ձեռքով դիտապատ ինկան Կ. Պոլսոյ, Ատանայի և յովակայից մէջ: Թու-փօրը կազմակերպուեցաւ մեր եկեղեցիի յովակայից մէջ. խուռն բաղուութիւն մը ներկայ էր, ի մէջ այլոց զինուորական, քաղաքական բարձր պաշտօնատերերը, իթթիհատանները և այլն: Յանուն Պան-տրմայի հասարակութեան ծաղկեպսակ մը պատրաստուած էր, զոր կը տանէին սուրպ և երկու հայ երիտասարդներ: Մերող զարդարեալ տղաք զորակներ ի ձեռին՝ անընդհան հայրենաշունչ կտորներ երգե-լով կ'առաջնորդէին թափօրը: Երբ դե-րեքմանատան հասան, հոգեհանգստեան արարողութիւնը աւարտելէ ետք ճառա-խօսութիւններ ըրին Ռէփիկ միտրոն Նէփի պէյ, զինուորական մը, Ս. Էֆ. Պետրոս-եան, Արամ Էֆ. Թորոսեան, Ա. Էֆ. Կիրիւս, Թ. Էֆ. Շիրինեան և Գ. Էֆ. Գլորիան: Առաջին փոխանորդ հայրեն մէկ պահպանող վերջ գտաւ և թա-փօրը նոյն հանդիսարարութեամբ վերա-դարձաւ: Ներկայ գտնուող պաշտօնա-կաները յետոյ պատասխանեցան եկե-ղեցւոյ բաղին մէջ:
* * * Նոյն կիրակի գիշեր, ի պատիւ Հնչակեան կուսակցութեան, աղկանց վարժարանի սրահին մէջ Պ. Հ. Արամ-եանցի «Էփէյ ի Ազատութիւն» թատե-

ԹԱՐԻՈՒՆ “ԱՐԵՎԵԼԻ” (7)
ՀԱՄԻՆԵԱՆ ԲԵԺԻՍԸ
Գրեց՝ **ԲՕԼ ՏԸ ՌԷԿԼԱ**
ԳԼՈՒԽ Բ.
ՄԱՐԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ
Վիեննայի բժիշկը, որ իր պալատա-կան պաշտօնակցին կողմէ կատարուած դարմանութիւն հանած էր, խոտարանա-հիւանդը բուժել երկու ամիսէն, եթէ այն ի գործ դնէր իր պատուէնները: Բայց վիեննայի մասնագէտը վիրադարձաւ, ա-ռանց թոյլ տուելու անկեղծ ժողովը պատող անձերին զատ ուրիշ մէկու մը հետ յարաբերութիւն ունենայ ան:
Այն ատեն լրագիրները ապագովիչ լու-րեր հրատարակեցին վեհապետին առող-ջական վիճակին վրայ: Նորէն կը խոսուէր թուր կապելու պաշտօնական արարողու-

կուն զաւակն է, և մայրն ալ 1849ին մե-ւած է հիւժմայտէ, քսանըկեց տարեկան հասակին մէջ, բայց ոչ թէ Ապտիւլ-Մե-հմիտ այն զաւակը, որ նմանապէս հիւ-ժմայտէ մեռած է երեսունընը տարեկան:
Մօրը մահունընի յետոյ, Ապտիւլ-Հա-միտ յանձնուեցաւ Բէքթաշի-Հանդի ինա-մածութեան, որ Ապտիւլ-Մեհմիտ չոր-րորդ կինն էր:
Բէքթաշի-Հանդ, զաւակ չունենա-լուն, զեւտաթի իշխանին նուիրուեցաւ հո-գեպիւ, որով մեծեց ամուսնաւոր Ապտի-ւլ-Աղիդի հետ, երբ այս վերջինը լաջոր-դեց Ապտիւլ-Մեհմիտին:
Բէքթաշի-Հանդ նշանաւոր եղած է իր գեղեցկութեամբ և վաղախ Սուլթան տիրութեան կը կրէր: Կարծր ար անձերու ք-սածին նայելով, Ապտիւլ-Համիտ յաճախ մեծ ապերախութիւն մը ցոյց կուտար այդ կնոջ նկատմամբ, որ զաւակն պէս խնամած էր զինքը:
Սա ստոյգ է որ «Կարմիր Սուլթան»-ը, որ այն ատեն տեղայն Սուլթանն էր, մէկը աւելի անգամներ անպատկառ լիզու-մը գործածած է վաղախ Սուլթանի նկատ-մամբ:
(Շարունակելի)

— Ոստիկանական ամենն էն անիմաստ ժուրնալներուն կարեւորութիւն կ'ընծայէր և ոսկիով կը վարձաբերէր ամենն ծիծաղելի սուտերը: Լրտես մը օր մը ըսաւ Համբարձումի թէ Գիւրբաթը Ղաւաթիայէն մինչև Նըւզադը թիւնէլ մը կը շինեն, Նըւզադը օդը հանելու համար, թէնս հինգ հազար

գործաւոր չորս տարի աշխատելով պիտի չկրնային այդ տեսակ ծրագիրը մը յաջող-
ցնել: Այսինքն 500 ոսկի և պատուա-
նշան մը տուաւ այդ լրտեսին:

ՀԱՄԻՏ ԴԱՏՈՒՄԻ ԿՈՒՅԷ.— Կ.
Պոլսէն կը հեռագրեն Ռիդէրի թէ Հա-
միտ կ'ուզէ դատուիլ իրեն դէմ եղած
ամբաստանութիւններուն համար՝ վերջին
դէպքերուն մէջ իրեն վերագրուած դերին
նկատմամբ:

ՍՍԼԱՆԻՆԷՆ կը հեռագրեն Տիլի
Թէիկերմի.— Համիտ համակերպած է իր
վերջին և ժամանակին մեծ մասը կ'ան-
ցնէ վիլլային պատգամին վրայ: Այդ
չէնքը պարտուած է պահպանելով: Հա-
միտ զինուոր պատեն դէմ կեցած են:
Վիլլային ներքին մասին մէջ ալ քսան
սպաններ կեցած են պարզ զինուորի հա-
գուստով:

ՀԱՄԻՏԻՆ հեծելազորայնները ասկէ
վերջը պիտի կոչուին թեթեւազէն հեծե-
լազորայն:

ԳԱԼԱՌԻՆ վոյվոտա պահականոցին
երբեմին անտիկանութեան գոմիսէր Շէմսի
անուն հասնի նախակապն հարցաքննու-
թեան տեղեկագիրը յանձնուեցաւ զինու-
կան ատեսանին:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՎԵՋ. ԳԱՅՈՒՆ ԶԱՄԱՐ ԳՈՒՀԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Ազգ. Պատրիարքարանէ հետեւեալ
չրջաբերականը լրկուած է.

Վեթափառ Կայսեր, Սուլթան Մէհմէտ
Ե. Կարգադատի Գահակալութեան առ-
թիւ յառաջիկայ Կիրակի, Ապրիլ 26, գո-
հարանական աղօթքներ պիտի կատար-
ուին Մայր Եկեղեցւոյ մէջ, ժամը 3 1/2-ին:
Ուստի, սոյն չրջաբերականաւ կը
հրաւիրենք մայրաքաղաքի Ս. Եկեղեցեաց
քարոզիչները, Աւագներէն, Աթոռա-
կալները և Պատ. Թաղ. Որդուորդները
Մայր Եկեղեցւոյ մէջ նոյն ժամուին ներկայ
գտնուիլ ու մասնակցել ՎեՋ. Սուլթանին
արեւշատութեան համար ըլլալիք գոհա-
բանական աղօթից և փառաբանութեանց:

Մեմուր Ապարաւ
ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՊԱՔ

Ապրիլ 22 1909

ԱՏԱՆԱՅԻ ԶԱՐԴԸ

Ազգ. Երեսփ. Ժողովը այսօր դռնփակ
նիստ մը պիտի գումարէ Ղալաթիոյ Ուր-
հրաբանին մէջ, ներկայ պիտի գտնուի
նաև Ընդհ. Հայոց Ս. Հայրապետը: Այս
նիստին մէջ Ժողովը միմիայն պիտի զբաղի
Ատանայի վարդին և այդ վարդաք բար-
բարոսութեան հետեւանքով յառաջ եկած
զարմուտի ինտելեկտները ամօքելու
միջոցներուն վրայ: Արդէն հազարաւորներ
են հեռագիրներն ու նամակները որոնք
ամէն օր կը հասնին Պատրիարքարան և
վարդի, թայանի ու ծայրայեղ աղքատու-
թեան և սովի նկարագրութիւնը ընելով,
օգնութիւն կը խնդրեն: Երկ Ազգ. Պատ-
րիարքարան հասած նամակներն ու հեռա-
գիրները կը յայտարարեն թէ՛ իւրեքնուե-
րունի մէջ հայ անունով մարդ չէ մնա-
ցած, թէ ուրիշ տարու աղիկները խու-
ժանին կողմէ պղծուելէ ետք, գամերով
կը կախուին պատուներ, թէ կիններն ու
այրերը Երբիլ օրէնքի անունով բռնու-
թեանը կիսամաքներն: Բռնածինը գետը
կը նետեն ու անլուր բարբարոսային չար-
չարանքներ ի գործ կը դնեն: Ահաւասիկ
երկ Պատրիարքարան հասած նոր հեռա-
գիրները, որոնք եւս խորհրդակցութեան
առարկայ պիտի ըլլան այսօրուան Ազգ.
Ժողովին մէջ: «Հանքն 22 Ապրիլ.— Ար-
դէն աստիճանութեամբ տիրապետող սղու-
թեան ու սովին վրայ աւելցաւ մահացու
հիւանդութիւն մըն ալ: Ետտիկ և Բուս-
լիի հրեանքն ու թայանէն պատած ընա-
կիներն ալ Հանքնի մէջ կը գտնուին:
Ազգաւոր բերեն ու որբուկները պատած մը
հացի համար արեւն արցունք կը իրափնին:
Աղէտայի տեսարաններուն օրտալով թըշ-
ուառութիւնը բաւական համար, ազա-
տարը ձեռքերու օգնութեան կը կարօ-
տինք: 15,000 կարօտաւորներու անունով
փրկութիւն կը թախանձենք. Հանքնի
առաջնորդ՝ Ներսէս:» Հանքն 22 Ապրիլ.
Քաղաքին ենթարկուած աղէտին պատ-
ճառաւ, անօթութենէ թիպաբեքի համա-
ճարակը զր իւ ցոյց տուաւ: Քաղաքին
առաջնորդն ալ ծանր վիճակի մէջ, կը
տուաւսի թիպաբեքի: Համադարձակին և
ուսկը անունը համար անմիջական մի-
ջոցներ փութացուցէք: Առաջն. փոխա-
նորդ Յակոբ քնն:» «Մերսին 22 Ապրիլ.
Ատանայի և թարսուսի 20,000 հրկիւնա-
ներուն բաւականապէս վրան չընտով զը-
կուելու համար կայս. կառավարութեան
զիմեցէք: 26րդ զրկած 500 ոսկին և Ման-
չէթթէն զրկուած 300 ոսկին դեռ չկըր-

ցանք զանձնը: Ասոնցմէ զատ դրամ, ճե-
մակեղէն, անկողին, հագուստ զրկեցէք
փութով: Ատանայի վրէ՛»:

* * Պէրսիսի մէջ հանգանակութեան
տոմար մը բացուած է Ատանայի աղէտ-
եալներուն օգնութիւն հասցնելու համար:
Առաջին ատիւ տեղւոյն Յունաց բարե-
գործական ընկերութիւնը 60 ոսկի, իս-
լամ բարեգործական ընկերութիւնը՝ 50 և
տեղւոյն Հայ-Հռոմէականներու առաջն.
փոխանորդը առաջին անգամուն համար
50 ոսկի տուած են:

* * Սապանի մէջ կը կարգանք.—
Մարաշի մէջ խաղաղութիւնը վերահա-
տառուելու վրայ է. խռովութիւններն յա-
րուցանող կարգ մը մարդիկ ձերբակալուե-
րն կառավարութեան կողմէ և բանտար-
կուեցին: Ամէն կողմէ հետզհետէ զին-
ւորներ Մարաշ հասած ըլլալով այլեւս
նոյն տեղէն վտանգը հեռացած է: Ընթեր-
Շուղուրի (Հայէպ) Բէշապ գիւղին վրայ
յարձակեր է չըջականերու մէջ գտնուող
խռովարար և ոճրագործ խումբ մը:
Կարգելէ, թալլելէ վերջ հրեանքի տուած
է գիւղը: Ժողովուրդը կազմել է ձիւրը
Շուղուր փախած է:

* * Իզմիրի Գաւառ. Ժողովը վերջին
անգամ Ատանայի վարդին և աղէտեալնե-
րուն օգնութիւն հասցնելու համար ար-
տասովոր նիստ գումարեց և երեսփո-
խաներէն Սեթրէ Էֆ. Գալիթեան հրա-
ւիրեց է Ժողովը Ազգ. հրամայական պար-
տականութիւն մը նկատել իրեն համար,
Ա.—Բողոքել որուն օր անկ է հալամարդ-
կային աղէտին համար որ ամօթ մըն է
Օսմ. Հայրենիքի ճակատին: Բ.—Պահանջել
որ Օսմ. կառավարութիւնը անմիջական
միջոցներ ձեռք առնէ կառարեկապէս հա-
տատուելու համար խաղաղութիւնը նա-
հանգներու մէջ և նպատակ հասցնել ան-
միջական կերպով, և Գ.—Պահանջել որ
հազարաւոր անմիջ նահապետներուն մահ-
ուան պատճառ եղողները խոտրի պատ-
ժուին: Որոշուեց է նաև որքան պարա-
պարելու և խնամելու համար որբանոց
մը հաստատել և առաջին ատիւ 100 որբ
որդեգրել: Ժողովը որոշեց յետոյ՝ բո-
ղոքի հեռագիրներ ուղղել և Յանձնա-
ժողով մը կազմել: Առաջնորդ Սրբազանին
նախագահութեամբ որ իր կարգին հա-
մազգային նպատակը Յանձնաժողով մը
կազմէ նպատակ մեծ գումար մը ձեռք
բերելու համար:

* * Լիվընդ Հերթի Մէրսինի թղթա-
կիցը հետեւեալ կը գրէ իր թղթին,
ապրիլ 25 թիւով. «Ատանայի երկէ հա-
սած լուրերը շատ աղետալի են: Կ'ըսուի
թէ վարդերը վերանցած էին վարդաք կա-
տաղութեամբ: Հայոց վարժարանը, ուր
սպաստանած էին վիրաւորները, այրիները
ու որբերը, կրակի տրուեցաւ, և ամէն
անոնք որ իրենց խելագարութեան մէջ կը
լանային խոյս տալ, վարդի պարագլուխ-
ներու հարուածին տակ կ'իյնային, որպէս
զի ոչ ոք կարենայ փախչիլ: Հայոց եկե-
ղեցին ալ միեւնոյն վիճակին մատնուած
է, ինչպէս նաեւ բոլոր այն տունները, ո-
րոնք առաջին յարձակման ատեն մնա-
ուած չէին: Անք. հիւպատոսը, որ Ատա-
նա կը գտնուի դէպքերու սկիզբէն ի վեր
և վիրաւորուած է, կուսակալին զիմեով
ազգաբարձ է որ դարբեցնել տայ կո-
տորածը, և թէ ինչ կը ստանձնէր մնա-
ցեալ Հայերը ազատուել գործը: Արգա-
րեւ, հիւպատոսը Հայոց թաղերը կ'երթայ
հետեւորդներով, և ողջ մնացողները կը
հաւաքէ կառավարական պաշտօնատան
մէջ: 2րդ գիտցուի թէ ինչ եղած են այդ
մարդիկը: Ս. Ժոզէֆ Բոյրերու մենա-
տանին և ամբիկեան հաստատութեան մը
մէջ գտնուողները գտնելով Հայերը ա-
ռած տարած են, սպանդանոց տալի-
նորդուող ոչխարներու պէս: Բոյր օ-
տարազգի ընտանիքները, Յոյն ու Սու-
րիացի, իրիկուան ճեպընթաց կառավար-
ւում մեկնած են Ատանայէն: Մարդուն
սիրտը կը ըզըտուի, տեսնելով այնպիսի
անձեր, որոնք ճոխութեան մէջ ապրելէ
յետոյ թշուառութեան մատնուած են
այսօր: Բաց ի քան մը օտարազգիներու
և իսլամներու ընտանիքներէն, մնացեալ
չէնքերը մոխիր դարձած են: Ջարդուղիները
սիւթէմաթի կերպով ի գործ կը դնէին
թալանը, չըջապաղելով այն տուններ և
վաճառատունները, որոնք յազուրդ պիտի
տային իրենց ընդազգացութեան, թոյլ
չտալով որ ո՛չ ոք մօտենայ. իրենց ա-
ւարի բաժինը պահանջող յանդուգն կո-
ղտապիւններուն իսկ կը սպանային, մին-
չեւ որ թալլէին ամէնէն թանկագին ու
զիրարատար առարկաները: Դէպի Կիպրոս
երկէ ճամբայ ելած աւստրիական չղջե-
նակ մը մէջ 650է աւելի անձեր կային,
որոնք Մէրսինէն Լարնաքա կ'երթան:
Նաւահանգստին մէջ գտնուող երեք զրա-
հաւորները վախ չեն պատճառած իրաւա-
բարներուն: Իրիկուան կառավարմամբ հա-
սած լուրերը աւելի գէշ են: Հրեանք
միշտ կը շարունակէր իր աւերիչ գործը:
Ժողովութիւնը վարժարանը այրած էր,
իսկ Հայոց եկեղեցին կը շարունակէր իր
դիմադրութիւնը, հակառակ պարագլուխ-

ներու կողմէ եղած աղբարարութեանց որ
անձնատուր ըլլան, եթէ չեն ուզեր ողջ
ողջ ապրիլ: Քաղաքին մէջ երթեւեկա-
թիւնը անկարելի է առանց հետեւորդի:
Ատանա քաղաքը մեռելատան մը դար-
ձած է: Իրիկուրը ուշ տօնէն Համիսիե
յաճառարակը հոս հասաւ և 101 թիւդա-
նօթ արձակեց, նոր Սուլթանին գա-
հակալութիւնը ողջունելու համար:
Պրանսական Վիքոր Հիւլիօ յաճառարակն
ալ 21 թիւդանօթի հարուած պարպեց:
Միւս մարտնաւերթ թիւդանօթ չարձակե-
ցին, Գահակալութեան լուրը պաշտօնա-
պէս հաղորդուած չըլլալուն համար: Ի-
րիկուան ժամը 5ին, պաշտօնական ընդու-
նելուութին պիտի կատարուի կառավարա-
կան պաշտօնատան մէջ: Մեր պարտքն է
գովեստով խօսիլ վարդութեանց և մաս-
նաւորաբար Օսմ. Պանքայի պաշտօնեանե-
րուն նկատմամբ, որոնք վարդեանէ
վարդեան կը սպաննէին ջարդի սկզբնա-
րութեան մը — որովհետեւ վտանգը վե-
րահան էր և ջարդ պիտի կատարուէր՝ ա-
ռանց արժէքաւորքին անմոռանալի կորու-
սին — ու և վհատութիւն ցոյց չտուէր և
կանոնաւորապէս շարունակեցին իրենց աշ-
խատութիւնները: Օսմ. Պանքայի անօրէն
Պ. Իւնկար, ինչպէս նաեւ Պ. Ջաքարօֆ
և իր ընտանիքը ու քանի մը պաշտօնեա-
ներ հինգ գիւղեր պանքային մէջ մնացին,
մօտէն հետեւելու դէպքերուն և դրամա-
տունը պահպանելու համար:»

* * Եգիպտոսի առաջնորդ Աղանունի
վրդ. հետեւեալ հեռագիրը ուղղած է
ազգ. Պատրիարքարան, որուն մէջ օրի-
նակը հաղորդուած է խմբագրութեան.
«Վերջին վարդին պատասխանատու եղող
Ատանայի կուսակալը պաշարման վիճակ
յայտարարելէ յետոյ իսկ, տեղւոյն Իրի-
սալ լրագրին 33 թիւին մէջ իսլամներու
մտքերը լուրջը և զանոնք աստիճան գործ-
ուող յօդուածներ գրելու արտօնութիւն
տուեց է. հետեւաբար այդ վարդաք վար-
դին յետոյ հոս ապաստանող թշուառ Ա-
տանայի Հայերուն և արքայութեան ա-
նունով կը խնդրեմ որ յիշեալ կուսակա-
լին և վարդին հղինակներուն հետ մէկ-
տեղ, որոնք ընկալան է Հայ Ժողովուրդեան
կողմէ ցուցակով մը պիտի ներկայացուին
զինուորական ատեսանին, նոյն ատեսանին
առջեւ ամբաստանուին և մատենիչ ըլլան
նաև Իրիսալի արտօնատէքն ու խմբագր-
ները և դատաստանի տակ առնուելով
պատժուին այդ գրգռիչները:»

* * Միջազգային օգնութեան Յանձնա-
ժողովը գործը յայտը պայմաններու մէջ
կը գտնուի: Ստեփան Էֆ. Գարանան
անձամբ ներկայանալով Մանսուտ Ենվ-
քէի փաշայի, ինդրած է որ հանր իր
պատուական անդամակցութիւնը նուիրել
Յանձնաժողովին: Ենվքէի փաշա սիրա-
յօտար ընդունեց է իսկ Հայաճեմու Արամ
և Բեաթիկեան Էֆ. Ներու զիմուսին վրայ
Օսմ. Պանքայի, Բիւրիլ Լիւնի, Վիւնի
Պանքի տնօրէնները ընդունած են անդա-
մակցութիւնը նոյն Յանձնաժողովին:

* * Վեհ. Կայսրը բարեհաճեց է ըն-
դունիլ Միջազգային Յանձնաժողովին
պատուական նախագահութիւնը, իսկ նա-
խագահ ընտրուեց է Մերսինայի նախա-
գահ Սալիտ փաշա:

* * Նպատակը Յանձնաժողովը այսօր
400 ոսկիի ալիւր զրկեց Մէրսին՝ անէլ
Ատանա զրկուելու համար: Մանչեսթըրն
և Ռոտտըրդէն զգեստեղէն զրկուեցին է.
Եգիպտոսէն Պոլոս փաշայի ձեռամբ՝ 200
ոսկի, իսկ Օսմ. Պանքայի անօրէն Պ.
Տէֆէն հեռագրով 500 ոսկի զրկեց է:
Թիֆլիզի Առաջնորդ Սաթուրանց արգել-
եաւ հեռագրով ցաւ յայտներ է Ատանայի ա-
ղէտին ատիւ, միւս կողմէ ինդուրիւր որ
Պատրիարքարանէ մանրամասն տեղեկու-
թիւններ արուին աղէտի մասին, որպէս
զի պէտք եղած հանգանակութիւնը ընե-
լով դրամ հասցնէ, տուաւսպած, վար-
դուած ու թալանուած խեղճ կրիկեցի
Հայերուն:

* * Նպատակը Յանձնաժողովին կողմէ
որոշուած բժշկական մարմինը որ կը բաղ-
կանայ Տօքթ. Պալաքեան, Տօքթ. Բը-
լըճեան, Խ. Պոստաբաղեան, Եր. Փէշա-
մալեան, Միլլա Բէթէնեան, Միլլէ
Գարակօզեան, Յակոբ Միլլիհիսարեան,
Միլլալէ Էնէլլեան Էֆենտիներէն և հի-
ւանդապահուէն Տիկին Ժէնիք ու Օր.
Ս. Օնանլանեանէ, երէկ ժամը 10 1/2-ին
մեկնեցաւ Մէրսին, յանձնարարականներ
ունենալով իրենց հետ, շարժուան բաւանի
հրամանատար Ենվքէի փաշայէ, որպէս զի
Մէրսինի և Ատանայի մէջ ամէն դուրու-
թիւն ընծայուի անօթի:

* * Սիբեր Սաիֆայի Հուրրիյիդի մէջ
կը կարգանք.— Ատանայի մէջ կազմուելիք
զինուորական ատեսանին անդամներուն մին-
չեւ ժամանումը, նոյն քաղաքին մէջ կուսա-
կալէն, ընդհանուր դատաւարալէն և ուրիշ-
ներէ յանձնաժողով մը կազմուելով, ջըն-
նութեանց և հերկաններուն ձերբակալ-
մանը ձեռնարկած է:

* * Գաւառ գիւղի Մատեայ Ակուժարն
կողմէ Սեդրակ Տէր Պաղտատարեան, Մե-
լոն Յովակիմեան և Սեդրակ Գալաք-

եան էֆենտիներէ կազմուած պատգամա-
ւորութիւն մը երէկ ազատութեան հերոս
Էնվէր պէիի ներկայանալով խնդրեց իր
հովանաւորութեամբ պատուել Ատանայի
արկածելոց ի նպաստ յառաջիկայ 3 մա-
յիսի կիրակի օրը Գաւառից արուելիք
գոնֆէրանսին և այդ ատիւ կազմակեր-
պուած վիճակահանութեան էնվէր պէյ
համակարարի և սիրով ընդունելով իրենց
առաջարկը յայտարարեց թէ եթէ իր անձն
իսկ գոնէ հարկ ըլլայ պատրաստ է իր
հայրենակիցներուն համար: Վիճակահա-
նութեան դրուած են մէկ երկաթուղւոյ
արժեթուղթ և ինը ուրիշ արժեքաւոր
իրեղէնք, իւրաքանչիւր տոմսակի գինն է
5 դր. և կը ծախուի Գաւառ-Գիւլ Բա-
գար Եօլու Տիար Սեդրակ փառապանի
վաճառատունը, Մօլա Զատտէֆ Տիար
Գիւլգար Եօլուֆեանի խանութը և Պօլիս
Արծիւ և Պալեկեց գրասենեակը:

ԱԶԳ. ԺԱՂԱՎԱՆ. Միւսա Չեքազ և
Հրանտ Ասատուր, ու Բազ. Ժողովէն
Գարեան, Շարիֆեան ու Երեսփանեան
Էֆ. Ներք, երէկ, Սիւրտար երթալով, այ
ցեղեցին Վեհ. Կաթողիկոսին. որ պատ
գամաւորութեան հաղորդեց Ռուսիոյ դեռ
պահին հետ նախընթաց օր իր ունեցած
տեսակցութեան արդիւնքը՝ թէ ռուս կա-
ռավարութիւնը կը փափաքէր որ Ս. Հայ-
րապետը իջմիածին ուղեւորելէ առաջ՝
Բեքրեսպուրի երթալ Նիքոյա Բ. կայսեր
ներկայանալու: Տեսակցութիւնը տեսց
երկու ժամու չափ:

* * Ս. Կաթողիկոսին հրամանով, Ե-
րեսպոլիսի Ժառանգաւորաց վարժարանէն
եւեք ռուսաց իջմիածին մեկնեցան, հոն
Գեորգեան ձեմարանին մէջ իրենց ուսումը
աւարտելու համար:

* * Բուսանկան դեռպան Պ. Ջինովիչ
փոխադարձ այցելութիւն պիտի տայ Վեհ.
Կաթողիկոսին՝ Բերայի Արեւեստանոցի
սրահին մէջ:

ԲԱՆՈՒՅԻ ՄԱՂԸ.— Թանի մէջ կը
կարգանք.— «Թուս կը ծանուցանէ թէ
Բանոֆ, այն հայ օրագրողը որ պարսիկ
ազգայնականներու դատը ընդգրկած էր,
մինչեւ ընդհարումը մը մէջ՝ Ասորա-
պատի մօտ: Թիւրքմէնները պայտարած
են ծանրապէս վիրաւորուած, անձնասպան
եղեր է՝ անընդունելի ազատելու համար:
Բանոֆ Թիւի թղթակցին էր Թէհրանի
մէջ՝ պետական հարուածին ատեն: Իր
յօդուածները իրաւորք գնդապետին և
անոր յետադիմական գործունէութեանը
դէմ, յուզում առաջ բերած էին: Պ. Բա-
նոֆ մեռելէ առաջ յայտարարեց է. —
«Ինչեւեք, սիրեցեք ազատութիւնը ինչ-
պէս եւ սիրեցի և կ'աթողիս սիրեցի:
Միւս՝ քարով:»

ՍԱՐԱՍԱԿ ԱՅՆՈՒՄԱՐԻ ՄԵՋ.— Մեծ
սարափ մը տիրեց տեղւոյն մէջ, երբ
մարտ 31ի Պոլսոյ խաղաղութիւններէ վերջ
լսեցինք Ատանայի, Պաղէի, Օսմանիյի
և Հասան Պէյլիկի վարդերուն լուրերը:
Ապրիլ 5ի կիրակի իրիկուն լուր տարած-
ուեցաւ թէ՛ Անթիպոլսի պիտի զարնեն.
երկուշաբթի առտու Հայերը խանութ
չբացին ու վերի թաղերը քաղուեցան:
Ամէն վարդեան կոտորածի լուրեր կը
հասնէին ու ա'լ աւելի կը շատնար ան
ու սարսափը: Իոյրը Հայերը այսպէս հա-
ւաքուեցան վերի թաղին մէջ ու հայ
երկուսարդներու զինեալ խումբեր կազ-
մելով սկսան պահապանութեան: Գայմա-
գամ պէլը տեղւոյն թէ՛ իսլամ և թէ հայ
երեւելիները իր մօտ կանչելով զանոնք
վստահացուց թէ ո'չ մէկուն փողբիկ
վնաս մը հասցնել պիտի տայ: Բայց Հա-
յերը դարձեալ չի համարձակեցան խա-
նութ բանալ: Այսպէս հինգ օրեր անցան
առանց շուկա բացուելու. բայց արդա-
րութեան համար պէտք է ըսել թէ տեղ-
ւոյն իսլամները երբեք ու և է պղտիկ
խառնափոխութեան տեղի չտուին: Վեր-
ջապէս շարաթ, ապրիլ 11ին գա-
մազամ պէլը, իր հետ ունենալով
զարգացած իւլէմանը և քաղաքին իս-
լամ երեւելիները մը եկեղեցին եկաւ և
հոն Ժողովուրդը վստահացուց ու յանձ-
նարարեց որ այլ եւս խանութներ բա-
նան. ասոր վրայ բաւական խանութներ
բացուեցան և յուզումը ըստ բաւականի
անցաւ: Այս առթիւ կ'արժէ շնորհաւորել
տեղւոյն թէ՛ զայմագալը և թէ իսլամ
կրօն

ՊԵՅԲԸՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


241 370 500 ԲԵՐԱ 500 370 241

ԱՆԿՈՂՆԻ ԿԱԶՄԱԾՆԵՐ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԱՌԱՐԿԱՆԵՐ



ՄԵԾ ՄԹԵՐԻՔ ՓԱՅՏԷ, ԵՐԿԱԹԷ ԵՒ ԱՆԱԳԱՊԼԻՆՁԷ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՒ,
ՏՂՈՑ, ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԵՒ ՕԹԷԼԻ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՒ

ԲԱՑՈՒՄ ԱՅՐԵՐՈՒ, ՄԱՆՉԵՐՈՒ ԵՒ ՓՈՔԻ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ
ՊԱՏՐԱՍՏ ԶԳԵՍՏԵՂԷՆՆԵՐՈՒ ՃԻՒՂԻՆ



ՄԵԾ ԺԱՄԱՆՈՒՄ ՆՈՐ ԶԳԵՍՏԵՂԷՆՆԵՐՈՒ

ԱՅՐԵՐՈՒ, ՄԱՆՉԵՐՈՒ ԵՒ ՓՈՔԻ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ
ՎԱՅԵԼՈՒՉ ԶԵԻՆՈՎ, ԵՒ ՎԵՐՋԻՆ ՆՈՐԱԶԵԻՆԻՓԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆ